ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք

ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 098460002 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 17

ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով ավագանին

ՈՐՈՇԵՑ

Հաստատել ավագանու 2017 թվականի թիվ 7 նիստի հետևյալ օրակարգը.

1. Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
2.Համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը , գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը , հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին:
3.Կանաչուտ համայնքի 2017 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԲԱՂՊԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻՆ
3. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒՊԵՔՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇԱՌՈՒԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԻՆՅԱՆ ՎԱՐՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԵՍԱՍՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 098460002 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 18- Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ‹‹Տեղական Ինքնակառավարման մասին›› Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ և 19-րդ կետերի, ‹‹Տեղական տուրքերի և վճարների մասին›› օրենքի 12-րդ, 14-րդ հոդվածների պահանջներով, ավագանին որոշում է՝

1.Կանաչուտ համայնքի վարչական տարածքում 2018 թ. համար սահմանել <<Տեղական տուրքերի և վճարների >> հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ.
2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ,
բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,
գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.
3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ.
4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.
5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.
6) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր

եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.
բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասնհինգ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսանհինգ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեսուն հազար դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ հիսուն հազար դրամ.
7) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
8) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին

համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հիսուն հազար դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսանհինգ հազար դրամ.
9) համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրքը սահմանվում է՝
ա. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,
բ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ,
գ. դատարկ գովազդային վահանակների համար՝ երեք հարյուր յոթանասունհինգ դրամ
1,2,3,4,5,6,7,8,9 կետերի համար կիրառել 0,5 գործակից:
Համայնքի տարածքում տեղական վճարների դրույքաչափերը.

Համայնքի տարածքում կարող են սահմանվել տեղական հետևյալ վճարները.
1. համայնքի տարածքում շինարարության կամ արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական շինարարության ավարտը փաստագրելու տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայության դիմաց հատուցման վճար՝ 1000 դրամ:
2. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման մասնակիցներից վճար 500 դրամ:

3.համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճար՝ յուրաքանչյուր ամսվա համար՝

ա. փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար 100 դրամ.

բ. առևտրի, այդ թվում՝ շուկաների, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացնող շինությունների մասով՝ 1 քմ 20 դրամ.

գ. արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ 1 քմ 5 դրամ.

դ. կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և այլ շինությունների մասով՝ 1 քմ 2 դրամ:

Կողմ -7 Դեմ -0 Չեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ
3. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒՌԵՌՆ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇԱՌՈՒԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐՊԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք

ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 098460002 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 19-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԻ ՉԱՓԸ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով, ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2018 թվականի համար.

1. Համայնքի ղեկավար-190.000

Հայեցողական պաշտոն

1.Համայնքի ղեկավարի տեղակալ-1-120.000

Համայնքային ծառայողական պաշտոններ

1. Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար-1-150.000
2.Համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ-1-145.000
3.Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ-1-100.000

Տեխ. սպասարկման անձնակազմ

1.Հարկահավաք-1-85.000
2.Պահակ/կատարածու-1-85.000
3.Հավաքարար-1-85.000
4.Այգեպան-1-90.000

Մշակույթի տուն

1.Մշակույթի տան տնօրեն-1-90.000

Գրադարան

1.Գրադարանավար-1-90.000

Մանկապարտեզ

1.Մանկապարտեզի տնօրեն-1-143.000
2. Դաստիարակ-1-142.000
3.Հաշվապահ-1-80.000
4. Դայակ-1-80.000
5.Հավաքարար-1-80.000

6.Խոհարար-1-80.000
7.Պահակ-1-80.000

Կողմ -7 Դեմ -0 Չեզոպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ
3. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒՌԵՔ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՇԱՌՈՒԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ
7. ԵԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ.ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Կանաչուտ համայնք

ՀՀ, Արարատի մարզ, գ. Կանաչուտ, 09846002 kanachutgp@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 20-Ն

ԿԱՆԱՉՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթներով ավագանին որոշեց.

Հողի օտարում չկատարելու պատճառով 2017 թվականի ֆոնդային բյուջեի եկամուտները և ծախսերը պակասեցնել 4000,0 դրամով՝

01-06-01-60 ծրագրի 5133 հոդվածից պակասեցնել 980,0 հազար դրամ
01-06-01-60 ծրագրի 5134 հոդվածից՝ 200,0 հազար դրամ
09-06-01 ծրագրի 5113 հոդվածից՝980,0 հազար դրամ
04-05-01-58 ծրագրի 5113 հոդվածից՝ 1200,0 հազար դրամ
06-04-01-52 ծրագրի 5113 հոդվածից՝ 640,0 հազար դրամ
09-08-01-55 ծրագրի 4239 հոդվածից պակասեցնել 100,0 դրամ և տալ 10-07-01-54 ծրագրի 4726 հոդվածին
08-02-04-51 ծրագրի 4239 հոդվածին պակասեցնել 500,0 հազար դրամ և տալ 10-07-01-54 ծրագրի 4729 հոդվածին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԳԱԳԻԿ
2. ԲԱՂՍԱՍԱՐՅԱՆ ՀԱՐՈՒԹԻԿ
3. ԵՓՐԵՄՅԱՆ ԺՈՒԴԵՔՍ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԾԱՌՈՒԿ
5. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐԱՐԱՏ
6. ՄՈՎՍԻՍՅԱՆ ԳԵՎՈՐԳ

7. ՇԱՀԻՆՅԱՆ ԿԱՐԴԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Լ.ԱՍԱՏՐՅԱՆ